# ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՄՆՁՈՒՐՈՒ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

**ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐԱ**
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԳՊՀ դասախոս
**ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼՎԻՆԱ**
ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն»
բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի

Մնձուրու ստեղծագործությունների պատկերավորման համակարգում մեծ տեղ են գրավում հայրենի բնությունն ու նրա յուրօրինակ դրսևորումները, բնաշխարհի հազվագյուտ երևույթներն ու արտահայտությունները: Գրողի ստեղծագործություններում տիրում է մի վեհաշունչ բնափիլիսոփայություն: Բնությունը մանրամասնում է մարդկային հոգու նրբերանգները, գեղարվեստական կերպարի էական հատկանիշներն ու բնավորության գծերը դարձնում ցայտուն ու երևացող: Այն իր տարածական դաշտի շնորհիվ գրեթե տեսանելի է դարձնում այս կամ այն կերպարի գործողությունները, կերպարները հասցնում նկարչական պարզության ու մատչելիության: Այդ ստեղծագործությունների մեջ սահմանակցված-միաձուլված են գեղեցիկն ու առօրեականը, հրաշքն ու անհավատալին, դրամատիկն ու ողբերգականը, վեհությունն ու նսեմությունը: Ծաղկած փշատենու փոքրիկ ծաղիկները, նշանված Նարոյի ծամերին կպչելով, «մատնում են» նրա գաղտնի ժամադրությունը փշատենու շուքի տակ («Փշատին ծաղիկը»)[1]:

Ավանդապաշտ հայ գեղջուկի համար հայրենի երկիրն ու բնությունը ամեն ինչ են՝ և՛ հայրենիք, հայրենի հող ու ջուր, և՛ կենսամիջոց ու գեղեցկության ակունք: Նա իր առօրյա հոգսերի մեջ անգամ հրապուրված է այդ բնությամբ, երկրի հող ու ջրով, որոնց կապված է բազում թելերով:

«Մելիքենց Մըկրչը» գողտրիկ պատմվածքում իր մարդկային ես-ը բնության տարերքից անանջատ չպատկերացնող Մըկրչը գրողի կերտած հետաքրքիր կերպարներից է:

Բնությանը սիրահարված մարդու աչքերով է նկարագրում Մնձուրին հայրենի բարեբեր անտառները, աշնանային գույների ու համերի հմայքը: Այս

[1] Տե՛ս Մնձուրի Հ., Երկեր, Երևան, 1986, էջ 231:

ամենին ինքնիշխանորեն տիրակալող Մըկրչը հնչեցնում է գրողի մեծ սերը առ հայրենի երկիր և նրա մարդիկ:

«Հոկտեմբերին հետ այգիներուն եղանակը կվերջանար: Ամեն հանդի պես Խառիծակն ալ կամայանար: Առուին ջուրը նորեն գետը կդարձնեին, ու այգիե այգի բոլոր ջրանցքները կչորնային: Ծառերը կայրիանային: Մինակ գետին ձայնը կշարունակվեր, ու Մըկրչը, նախամարդոց պես, կթափառեր այգիե այգի…Մեր թզենիները գետինը, ավազներուն երեսը կտարածվին տասնյակ մը ու ավելի ցողուններով: Թուզերը չտեսնվելեն ու մնալեն այնքան հասունացած կըլլային, որ ձեռքդ դեռ դպցուցած՝ մեղրերը դուրս կպայթեին»[1]:

Մելիքենց Մըկրչի կերպարը իր խոսուն ենթատեքստով վերարծարծում է մարդու և բնության հավերժ գոյակցությունը՝ բարությամբ և մաքրությամբ օծուն: Այդ ստեղծագործական հատկանիշը Մնձուրու երկերում առկա է հատկապես բնանկարների շարքում («Լեռնանկար», «Գետնանկար», «Ձյունանկար» և այլն):

Մնձուրին բացառապես հավատարիմ, երկյուղած սեր ու հարգանքով լցված մնաց բնության նկատմամբ, և դրա առաջին արտահայտություններից մեկը իր գրականության մեջ եղավ այն, որ բնությունը նույնպես ձեռք բերեց այն հատկանիշները, որ ուներ Մնձուրի գրողի համար ամենապաշտելին՝ մարդը: Եվ այսպես, *խնձորենիները հոգնած երևույթ առին, ընկուզենիները տերևաթափի պատրաստվեցին.* «Աշուն ըլլալով՝ խնձորենիները ու սալորենիները հոգնած երևույթ մըն էին առեր, ընկուզենիները մինչև գետինները հակող իրենց ճյուղերով տերևաթափի կպատրաստվեին, ու ագռավները բարտիներուն վրա թառեր կկանչվռտեին»[2]: Նա այնպիսի հրաշալի ձևով է նկարագրել սեխը, որ ընթերցելով այդ հատվածները՝ մեզ թվում է, թե ուղղված է իր սիրած աղջկան: «Գետին նորեն Խառնիծակու ափը, Յունապիներեն, Ճուհարքարտակեն աստին, Ջերման կար: Այս հանդին շամամները աշխարհի ոչ մեկ տեղ կային: Ասոնք քթիդ բռնեիր, երկու երեք անգամ խորունկ քաշեիր, հոտը երկար ատեն քթեդ չէր երթար և ի՞նչ անուշ հոտ. այս վայելքը ուրիշ ոչ մեկ հոտ կուտար քեզի: Ու մինակ հոտերնի՞ն: Ափիդ մեջ պահել ու վրանին նայելդ անգամ կբավեր: Դեղին կըլլային, բայց ո՞ր

[1] Նույն տեղում, էջ 336 :

[2] Մնձուրի Հ., Կապույտ լույս, Ստամբուլ, 1958, էջ 108 :

դեղինը ըսեմ քեզի, լուսինի՞ն, արևի՞ն, մեղրի՞ն, ոսկիի՞ն: Անանկ ալ փափուկ ու զգուշությամբ պիտի շոշափեիր, կդողային ափիդ մեջ»[1]:

Մի այլ տեղ, կրկին անդրադառնալով Ջերմանի սեխերին, Մնձուրին նույն սիրահարվածությամբ գրում է. «Ջերմային շամամները համբավավոր էին, քուչակյան տաղերու երգած շամամները…խնձորի մը չափ: Խնձորեն քիչ մը ավելի մեծ: Բարակ մաշկով: Դեղին, դեղին գույնով: Մեղրին դեղինեն ալ դեղին: Չէին ուտվեր: Ափդ առնեիր, կդողային ափիդ մեջ: Դեմքդ կցոլացնեին՝ նայեիր վրան»[2]:

Մնձուրու գավառը ամբողջովին ձորերով էր ծածկված, որոնց մեջ հոսող մի քանի գետեր չորանում էին ամռանը. «Ատկե է, որ Գուրուրայ կըսեն, պաշտոնական անունը ատ է: Գավառին որոշ գոտիները բուռ են, աղի գույն, փխրուն քարի տեսակը մը, որոնցմե վազող ջրերը անպատմելիորեն լեղի են, բայց այդ մասերուն հողերն ալ շատ բարեբեր են, մեկի դեմ քսանչորս, անկե ալ ավելի կուտան, ատոր համար Արմտյաց գավառ ալ ըսել են, հին գրքերու մեջ»[3] :

Հեղինակը բացառապես լավ գիտեր բնությունը, ճանաչում էր յուրաքանչյուր ծառն ու թուփը, ծաղիկն ու բույսը. սփյուռքահայ գրականության մեջ ոչ մի «գյուղագիր» չունեցավ նրա նմանը, եթե նկատի չունենանք Վազգեն Շուշանյանին: Մնձուրու գրականության մեջ յուրաքանչյուր ծաղիկ ու բույս իր անունն ունի և զարմանալի չէր նման իմացությունը: Թերևս այդ անուններից շատերը «արմտաներեն» էին, օրինակ՝ ***տև*** էին կոչվում կաղնիների ոստերը, մատղաշ ճյուղերը, «լեռը տև գնալ» նշանակում էր կաղնիների ոստեր ու մատղաշ ճյուղերը հավաքելու գնալ: ***Տևին ամիսը*** սեպտեմբերն էր….:

Համեստ էին Արմտանի բնակարանները: Արմտանցիները բնակվում էին հարթածածկ բնակարաններում, որոնք ունեին նաև օժանդակ կառույցներ, հացատուն, մառան, թթվնոց, ախոռ, գոմ: Տան մեջ նստելու համար պատրաստվում էր հողատախտ, որը **«տոշկվում»** (ծածկվում) էր կարպետով. «Մեր տուներուն գետինը հող է, ծեփված ու ամբացված, կարասի, աթոռ չունեինք: Մենք չարդախին ինչպես սենյակներուն գետինները տոշկած ենք ներքնակներով, գունեղ կապերտներով, չուլերով, անոնց վրա կնստինք»[4]: Կար

---

[1] Մնձուրի Հ., Երկեր, Երևան, 1986, էջ 336:
[2] Նույն տեղում, էջ 336 :
[3] Տե՛ս Սևան Գ., Հակոբ Մնձուրի, Երևան, 1981:
[4] Մնձուրի Հ., Արմտան, Ստամբուլ, 1966, էջ 258:

օջախ՝ կերակուր եփելու և տաքանալու համար: Հարթածածկը տարբեր նպատակների համար օգտագործվող մեծ տարածք էր. «նախօրոք փռած մազե չուլերի վրա նոր թխած լավաշ ու ձավարեղեն էին չորացնում, ամռան շոգ երեկոներին՝ քնում, ցերեկները՝ երբեմն այստեղ ճաշում, հարսանիքների ժամանակ՝ ուրախանում, այստեղ էին բեռնաթափում ջորիները և այլն»[1]:

Մնձուրին հանգամանորեն շարադրել է տան մանրամասները՝ հիմնական սրահի, մուտքի և երդիկի կառուցվածքն ու կահավորումը. «Մեր երդիքները շատ հաստատուն էին, ինչու որ շատ հաստ սյուներու վրա կեցուցած էին, սյուներուն վրա քանի տեղ հեծան, անոնց վրա պատե գերաններ, գերաններուն միջև դարձեկներ, մարդակներ երկնցված, այնքան կկպցնեին իրարու, որ փակածի պես կերևնային, անոնց վրա որթոտով, չոր սեզերով կծածկեին, սեզերուն վրա հաստ ծեփ մը կքաշեին… շաբաթ մը գիշեր ցերեկ անձրև տեղար, մեր տուները չէին կաթեր, ջուրերը կհոսեին, կերթային, հարսանիքները երդստանը կընեինք, այնքան հարսնևորները լման շաբաթ մը կցատկեին, կխաղային, կպարեին, ամենևին տունը չէր երերա…»[2]:

Գյուղում կարևորվում էին տանտիկնոջ խոհանոցն ու բոլորին հայտնի հայ մարդու հյուրասիրությունը, որոնց նկարագրությունը գրողն անգամ իր փոքրածավալ պատմվածքներում է տվել: Հայկական խոհանոցը ներառում էր աղքատի, քիչ թե շատ ունևորի, տոնական, պաս օրերի, աշխատանքային, առօրյա կերակրատեսակներ, ինչպես նաև ձմռան համար պահեստավորվող տեսականին: Կարագը հարում էին տիկե խնոցիների մեջ. «Երկու հարսեր, մեկը գեր, մյուսը երկայն, կայներ են շվաքը, առիքեն կժչվանով տիկե խնոցը կախեր, դեմ դիմաց անցեր, կհարեն: Գեր հարսը, որ սև աչքեր ունի ու դեղին փուլերով լաչակ, մտիկ կընե: Ու երկուքը միասին, ուժեղ բազուկներով, առիքեն ձգված խնոցը կհարեն՝ արագ-արագ: Մածունը կերթա ու կուգա շարունակ, խնոցի մեջ միօրինակ եղանակ մը հորինելով: Միաժամանակ անոնք ականջ կդնեն ձայնին, որուն փոփոխութենեն պիտի գիտնան, թե՝ յուղը թանեն զատվելու վրա՞ է, թ՞ե ոչ…Բայց ահա կդադրեցնեն հարելը: Երկայնահասակը ծունկի կուգա, կքակե տիկին բերանը, որ յուղոտած ու խխում է դարձած, ու լույսին կբռնե…»[3]:

---

[1] Պապիկյան Ս., Արևմտահայ գյուղի կենցաղի նկարագիրը Հ. Մնձուրու ստեղծագործություններում, «Լրաբեր», թ.1, 2012թ., էջ 230-242:
[2] Մնձուրի Հ., Երկեր, Երևան, 1986, էջ 24
[3] Նույն տեղում, էջ 4:

Հ. Մնձուրին «Սիրահարություն մը», «Խիպը», «Մելիքենց Մըկրչը» պատմվածքներում, երբ նկարագրում է յուրահատուկ կերակուրների տեսակները, տալիս է «ցանկը» արտքաղի ժամանակ մատուցված ճաշերի, ծանոթացնում է Զատիկից հետո պատրաստվող «ճաշացուցակին», որ մինչև նոր բերքերի դուրս գալը համեստ է՝ կաթ, մածուն, թան ու թանով ապուր, և նկարագրում է հետաքրքիր սովորություններ: Օրինակ՝ ինչպե՞ս էին ուտում պանիրը Արմտանում. «Մենք պանիրը առանց ջուրի չէինք ուտեր: Թասը ջրով կլցնեինք, Նանոն զմելիովը բարակ- բարակ կկտրեր մեջը, հացը ջուրը կոխելով մեր մատներովը քչիկ մը պանիր առնելով կուտեինք: Հացերնիս ջուրը կծծեր, կհատներ ջուրը, տակը որո քիչ մը պանիրի լոսունք կմնար, նորեն մինչև թասին բերանը կլցնեինք ջուր, կթաթախեինք հացերնիս…»[1]:

Եթե բոլորը տանն էին, ուտում էին երեք անգամ՝ առավոտյան, կեսօրին և երեկոյան, բոլորը միասին, օգտվելով հարթ երեսով աթոռակի վրա դրված մատուցարանից՝ սինիից, որի վրա հիմնականում կավե ընդհանուր ամանով կերակուրն էր: Մատուցարանի վրա դրվում էին նաև ընտանիքի անդամների քանակությամբ գդալներ: Աթոռի կողքին՝ ձիթենու դալար ճյուղերից գործած զամբյուղի մեջ, նախօրոք թրջած- փափկացրած լավաշն էր: Այն չափերով բավականին մեծ էր: Հաց շատ էին ուտում: Նրանք, ինպես Մնձուրին է նշում, ամեն օր ժամանակ չունեին, որպեսզի հաց թխեին, այդ իսկ պատճառով հացը թխում էին այնքան, որքան իրենց կհերիքեր մեկ ամսվա ընթացքում:

Արմտանցիները զբաղվում էին երկրագործությամբ: Հողը վարում և ցանում էին գարնանը (գարնանացան) և աշնանը (աշնանացան): Գարնան հերկին նախորդում էր լծկանին «խամից» հանելը, որ կենդանիների ոտքերը բացվեն, քանզի 4-5 ամիս գոմում էին ձմեռում: Առաջին օրը նրանց տանում էին համեմատաբար մոտ տարածք և հետ բերում, երկրորդ օրը՝ քիչ ավելի հեռու, երրորդ օրը՝ էլ ավելի հեռու, և այդպես մի քանի օր, մինչև լծկանը «խամից» դուրս գար: Առաջին օրը միայն երկու ակոս էին վարում, երկրորդ օրը՝ չորս, և մինչև շաբաթվա վերջը ամեն օր ավելացվում էր երկու ակոս: Շաբաթվա վերջին արդեն վարում էին առավոտից երեկո: Հերկը դժվար էր: Երեք-չորս ակոս վարելուց հետո լծկան զույգի վզից լուծը իջեցնում, թողնում էին հանգստանալու, նոր զույգ էին լծում: «Դուն նստե, դուն մի ելլեր, ըսավ անոր, ամեն օր մեկերնիդ պիտի նստիք, հանգչիք, որ արտերը վարենք: Երեք դուք, մեյ մըն ալ ես, չորս ենք: Չորսին կը նային մեր արտերը: Մարագը

[1] Նույն տեղում, էջ 53:

երդով, ամպարները ցորենով, ալյուրով մենք պիտի լեցնենք: Ամենուն աչքը մեզի է, պապերս…»[1]: Կիրակի օրերը չէին աշխատում: Արմտանցիները աճեցնում էին գարի, ցորեն, վայրի ոսպ՝ վիկ, երբեմն էլ՝ եգիպտացորեն, տեխնիկական մշակաբույսերից՝ ծխախոտ և բամբակ: Նշենք, որ ծխախոտը՝ ճիկառան, փաթաթում և «խմում էին» միայն տղամարդիկ, որոնց մի մասը նույնիսկ կախվածություն էր ձեռք բերել[2]:

Արտքաղը՝ հունձը, սկսվում էր ամռանը՝ հուլիսին, և տևում մոտ մեկ ամիս: Շաբաթ երեկոները հնձվորները գյուղ էին գնում, կիրակի երեկոյան կրկին արտ վերադառնում, որ առավոտյան մութ ու լույսին քաղն սկսեն: Արտքաղին միանում էին հարևան կամ ազգական չորս-հինգ ընտանիք՝ քսան-քսանհինգ հնձվոր: «Այդ տարի հուլիսի կեսն էր, արտքաղը սկսեր էինք մեր գյուղին մեջ…մենք չորս տուներ միացած կինձեինք. մեր գերդաստանին իրարմե բաժնված երեք տուները, կնքահայր Գալուստենք: Ընդամենը՝ քսանմեկ հնձվոր…»[3]: Արտը հնձում էին մանգաղով՝ ձախ ձեռքին հագնելով յուրաքանչյուր մատի համար նախատեսված փայտե մատնոցներ:

Երեկոյան թեթև ընթրում էին, ապա կանայք անկողին էին պատրաստում սկզբում տղամարդկանց, հետո խրձերով կանգնեցված միջնորմի դիմաց՝ իրենց համար: Երեխատերերը քնում էին երեխաների մոտ՝ իրենց տաղավարներում:

Արմտանցին հիմնականում ինքն էր հայթայթում իրեն անհրաժեշտ աղը, փայտը, կավը: Աղը բերում էին ամռանը լեռներից մինչև սեպտեմբեր, երբ մշտապես հոսում էին աղաջրի առվակներ, որոնց ջուրը լցվում էր հատուկ աղ հավաքելու նպատակով արված կալանման մեծ ավազաններում: Մի տասը-տասնհինգ օր անց ավազանի ջուրը գոլորշիանում էր, իսկ կաթնանման սպիտակ աղը մնում էր հատակին: Կանայք, որոնց կարող էին նաև ուղեկցել տղամարդիկ, բարձկանների (հիմնականում ջորիների) հետ գնում էին լեռներ և պարկերով աղը բերում գյուղ:

Փայտը գրաստով (էշ, ջորի) նույնպես բերում էին լեռներից՝ հետները վերցնելով կացին, հոտոց, պարաններ, որոնք ամրացնում էին գրաստի համետին: Լեռներ էին բարձրանում վաղ առավոտյան՝ մթին, որ օրվա մեջ

---

[1] Մնձուրի Հ., Երկեր, Երևան, 1986, էջ 420:
[2] Նույն տեղում, էջ 40:
[3] Նույն տեղում, էջ 89:

ավելի շատ աշխատեին, մի քանի օրվա տեղափոխելու կաղնեփայտ կտրեին: Փայտը կտրել-բերելը տղամարդու աշխատանքն էր:

Այս գավառում հիգիենայի կարևորագույն միջոց էր կավը: Այլ միջոցի նրանք ծանոթ չէին: Կավահանքերից, որոնք շատ էին շրջակայքում, կանայք չոր եղանակներին լողանալու, լվացքի, շինարարության համար կավահող էին տեղափոխում գյուղ:

Ձմռան ազատ օրերին հայ կանայք բուրդ էին գզում, թել մանում և իրենց ընտանիքի համար տարբեր սփռոցներ ու այլ գործվածքներ գործում: Շատ էր կարևորվում կաշվե և կտավե տարբեր իրերի առկայությունը: Դրանք տրեխներ էին, տիկեր, խնոցիներ և այլն:

Հ. Մնձուրին իր երկու՝ «Էմրիկյանի փուռը գնաց»[1] և «Ոսկի տեղաց Ելպակյանի հարսանիքին»[2] պատմվածքներում ներկայացնում է ճոխ խնջույք և ճոխ հարսանիք՝ չմոռանալով շեշտել նաև այս ցուցադրական ճոխության բացասական հետևանքները, երբ իրար հետ մրցակցության մեջ մտած հարևանները կորցնում են ողջ ունեցվածքը, կործանում իրենց ընտանիքը: Այս ճոխության և մրցակցության կողքին շատ ավելի դաժան է երևում մեծահարուստի ժլատությունն աղքատ հարևանի՝ Մարտոյի հանդեպ, երբ ամբողջ օրվա զանազան ծանր աշխատանքների դիմաց տերը նրան վճարում է ընդամենը երկու հացով («Մարտո»)[3]:

Հեղինակը շատ է արժևորում իրենց գյուղը: Որպես հայ քրիստոնյա՝ նա կարևորում էր նաև եկեղեցին: Մի ողջ պատմություն է նվիրում եկեղեցուն, մանրամասնորեն նկարագրում է ոչ միայն արտաքին տեսքը, ներքին կառուցվածքը, այլև, որ շատ ավելի էական է, եկեղեցական-կրոնական արարողակարգը («Մեր ժամը»)[4]: Ժամը երկու դուռ ու երկու բակ ուներ, մի դռնից նախօրոք իրենց կոշիկները հանելուց հետո գուլպաներով մտնում էին տղամարդիկ, մյուսից՝ կանայք՝ ***չեփուկները*** (կրնկամասը բաց կանացի կոշիկներ, որ հագնում էին նաև տղամարդիկ) և ***չչլները*** (լաթե «կոշիկ», որ հագնում էին և՝ կանայք, և՝ երեխաները կարճ գուլպաների վրա) հանելուց հետո: Տղամարդկանց և կանաց տեղերն առանձին էին, երկու վերնատունն ու ժամի հետնամասը կանանց, իսկ ատյանի աջ ու ձախ կողմը՝ մինչև դասը,

---

[1] Մնձուրի Հ., Երկեր, Երևան, 1986, էջ 286-290 :
[2] Նույն տեղում, էջ 317-321:
[3] Նույն տեղում, էջ 110-114:
[4] Նույն տեղում, էջ 200:

տղամարդկանց համար էին, ընդ որում կանանց հատվածը ներքևից առանձնացված էր վանդակապատ այնքան խիտ ցանցով, որ տղամարդիկ դրա մյուս կողմում ոչինչ չէին տեսնում, և դա այն դեպքում, երբ կանայք ցանցի միջից հետևում էին եկեղեցական ողջ արարողությանը: Տարեց կանանց տեղը ներքևում էր, նրանցից հետո՝ միջին տարիքի, ամուսնացրած զավակ ունեցողներինը, իսկ վերնատունը՝ հարսներինը: Քանի որ եկեղեցին այն միակ տեղն էր, որտեղ կանայք կարող էին ի ցույց դնել իրենց արդ ու զարդը, ուստի հագնում էին տոնական զգեստներ և կրում լավագույն զարդերը: Զգեստը հիմնականում կարմիր կամ կապույտ ***էնթարին*** էր (պարեգոտ, կանացի երկար թևերով խալաթ), գլուխներին՝ ***ալլու-փուլլու*** (տարբեր գույների) գլխաշորեր, ճակատներին՝ զարդադրամներով ճակտնոց: Տղամարդիկ ավելի բազմազան էին հագնվում. որոշները կապույտ կտավից ***սալթա*** (բաճկոն) ու տաբատ, երիտասարդները՝ սևծովյան լազերի նեղ ***զպքաներ*** (անդրավարտիքներ), իսկ ***սիլա*** եկածները՝ իրենց հետ բերած եվրոպական տաբատն ու բաճկոնը: Գլուխները ծածկում էին ֆեսով՝ չորս բոլորը գույնզգույն թաշկինակ կապած կամ առանց դրա:

Յուրաքանչյուր կին կամ տղամարդ եկեղեցում ուներ իր տեղը. «Ամեն մարդ, այր կամ կին, մեր ժամուն մեջ իր տոշակը ուներ, որուն վրա կկայներ: Տարիքի կարգով ատոնք իրարու քով: Այրերունը ամենեն ետևի երկու կարգերը եկեղեցպանին ու գյուղին տարեցներուն տոշակները կային: Բայց հարուստներեն ոչ շատ տարիքովներն ալ հոն կկայնեին: Անդին Ապլայենց Էվլիա Պապամ, որմե ավելի ծերը չկար այրերուն մեջ...»[1]:

Եկեղեցում, առավոտ լիներ թե երեկո, ժամերգությունների ժամանակ ճրագ չէին վառում: Լուսավորումը միայն պատուհաններից էր. «Առտու-իրիկուն, մեր ժամուն ժամերգությունները առանց լույս վառելու կընեինք: Մեր կիրակիներն ալ լուր օրերուն պես էին: Մեր երեք սեղանները, մեր Մարիամ մայրը, Հիսուսը գիրկը, մեր սուրբերուն պատկերները, խաչերը, աշտանակները դուրսեն՝ պատուհաններեն եկած լույսով միայն կլուսավորվեին կամ մութին մեջ կմնային»[2]: Կանթեղներն ու ջահերը Զատկին ու Սուրբ Ծնունդին և եկեղեցական մյուս մեծ տոներին էին վառվում: Եկեղեցում աղոթում էին, բայց մոմ չէին վառում: Այն վառում էին լեռներում գտնվող մատուռներում ուխտի օրերին: Քահանան օրհնում էր միայն տները՝

[1] Մնձուրի Հ., Կռունկ, ուստի՞ կուգաս, Ստամբուլ, 1974, էջ 200:
[2] Նույն տեղում, էջ 201:

հարուստի, թե աղքատի, այն էլ՝ անվճար: «Մեր ժամը աղոթելու տեղ մըն էր միայն: Ոչ լումա կար, ոչ լումայափոխ: Իր հիմնադիրին՝ Հիսուսին ուզած ժամն էր: Տերտերին կալե կալ տունգլուխ երկուր կոտ ցորեն կուտայինք, մեկ կոտ ալ ժամկոչին, ընդամենը ադ էր: Դրամը երկու անգամ կտեսնվեր մեր ժամուն մեջ: Մեկը երկու ճրագալույցներուն, երբ Դանիելին գիրքը, կարդացվելուն համար, աճուրդի կդնեինք...»[1]: Այդ դրամները իսկական՝ պետական չէին, այլ կլոր, վրանները խաչ կախված փոքրիկ թիթեղներ, որ կտրում էր գյուղի դարբինը եկեղեցու համար և նրա հաշվին: Բնակիչները մեկ կամ երկու իսկական արծաթե ղուրուշ էին փոխանակում այդ մեկ կոպեկանոցներով և ճրագալույցին կամ մեծ տոներին, որպես նվիրատվություն, դրանք գցում էին շրջող պնակի մեջ: Եկեղեցում աղոթում էին ծնկած: Ապաշխարում էին Զատկից և Ծնունդից մեկ շաբաթ առաջ: Նորածնից սկսած՝ անգամ հիվանդն ու ծերը տարվա մեջ պահում էին բոլոր պասերը, յուրաքանչյուր չորեքշաբթի և ուրբաթ՝ շաբաթական մեծ պասը: Տարվա մեջ 184 օր պաս էր:

Ահա այսպիսին են բնության և կենցաղի պատկերները Մնձուրու պատմվածքներում:

***Բանալի բառեր՝*** *Մնձուրի, գյուղագիր, բնության և կենցաղի պատկերներ, բարեբեր անտառներ, հարթածածկ բնակարան, տանտիկնոջ խոհանոց, ժամերգություն:*

## Օգտագործված գրականություն


1. Մնձուրի Հ., Երկեր, Երևան, 1986:
2. Մնձուրի Հ., Կապույտ լույս, Ստամբուլ, 1958:
3. Մնձուրի Հ., Արմտան, Ստամբուլ, 1966:
4. Մնձուրի Հ., Կռունկ, ուստի՞ կուգաս, Ստամբուլ, 1974:
5. Պապիկյան Ս., Արևմտահայ գյուղի կենցաղի նկարագիրը Հ. Մնձուրու ստեղծագործություններում, «Լրաբեր», թ.1, 2012թ.:
6. Սևան Գ., Հակոբ Մնձուրի, Երևան, 1981:


[1] Նույն տեղում, էջ 220-221:

## IMAGES OF NATURE AND LIFE IN MNDZURI'S STORIES

**ARAQELYAN ARA**
*Doctor of Philology, Professor*
*GSU Lecturer*
**GRIGORYAN ALVINA**
*2nd-year MA Student at the Department of*
*Armenian Language and Literature of GSU*

The article examines the images of nature and life in the narratives by Hakob Mndzuri. The author has completed his works with the essential aspects of the historical-ethnographic description of Western Armenia and Westerm Armenian people.

The native nature and its unique manifestations, the rare phenomena and expressions of the natural world occupy a great place in the system of imagination in Mndzuri's creations.

***Key words:*** *Mndzuri, village writer, images of nature and life, fertile forests, flat cover dwelling, housewife kitchen, church service.*

## ОБРАЗЫ ПРИРОДЫ И ЖИЗНИ В РАССКАЗАХ МНДЗУРИ

**АРАКЕЛЯН АРА**
Доктор филологических наук, профессор
Преподаватель ГГУ
**ГРИГОРЯН АЛВИНА**
Студентка 2-ого курса филологического факультета отделения
«Армянский язык и литература» ГГУ

В статье рассматриваются образы природы и жизни в рассказах Акоба Мндзури. Автор в своих произведениях существенными аспектами историко-этнографического описания сделал целостным Западную Армению, западноармянский народ.

В системе воображения Мндзури, важное место занимают родная природа и ее уникальные проявления, редкие явления и выражения природного мира.

***Ключевые слова:*** *Мндзури,писатель-деревенщик, картины природы и быта, плодородные леса, плоскокровное жилище, кухня домохозяйки, церковная служба.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 16.03.2019թ.:
Հոդվածը գրախոսվել է 12.04.2019թ.: